ՀՏԴ 809.198.1. *Հայոց լեզու*

Նունե Խաչատրյան, բ.գ.թ., դոցենտ,
ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը ,պատերազմական թեմատիկան իր արտացոլումն է գտել հայ գրականության մեջ:Հոդվածում քննում ենք ազատամարտի արցախյան պոեզիայում գործածված համեմատությունները, որոնք ռճական առանձնակի արժեք ունեն :

Ազատամարտի բանաստեղծների համեմատություններում հաճախ երևույթները ներկայացվում են նոր կողմերով,նոր կապակցությունների մեջ, որը օգնում է իրականությունը ավելի խորը ճանաչելուն:

Վերլուծում ենք այս միջոցը կառուցվածքային և բովանդակային առումով,ինչպես նաև անդրադառնում ենք չափազանցության, հակադրության հիմքի վրա ստեղծված համեմատություններին : Համեմատության հնարավորությունները գործածված են շատ լայն ընդգրկումով՝ազգային շարժման,պայքարի, ինչպես նաև համազգային,քաղաքական ոլորտներից սկսած,վերջացրած հասարակական երևույթներին վերաբերող հարցերով:

Բանալի բառեր: *Համեմատություն, հատկանիշ, պոեզիա, պատկեր, ազատամարտ, ազգային շարժում, կերպար,առարկա,երևույթ,անձ, ռճական, պարզ, ծավալուն, գործածել,նկարագրել, ճանաչել*

Нунэ Хачатрян, к.ф.н., доцент
кафедра армянского языка

СРАВНЕНИЕ В ВОЕННОЙ ПОЭЗИИ

Арцахская национально-освободительная борьба и военная тема нашли свое отражение в армянской литературе. В статье мы рассматриваем сравнения, которые использованы в арцахской поэзии освободительной войны и имеют большую ценность.

В сравнениях, используемых поэтами-освободителями часто явления представляются по-новому, в новых отношениях, которые помогают лучше познать реальность.

Мы анализируем этот метод с точки зрения структуры и содержания, а также ссылаемся на сравнения, основанные на преувеличении и контрасте. Возможности сравнений широко используются в вопросах национального движения, борьбы, а также начиная с общенациональных, политических сфер и заканчивая вопросами, касающихся общественных явлений.

Ключевые слова: *сравнение, свойство, поэзия, образ, борьба за свободу, национальное движение, предмет, явление, личность, стилистический, простой, объемный, использовать, описать, узнавать*

Nouneh Khachatryan, Ph.D., Associate Professor
Department of Armenian Language

COMPARISON IN MILITARY POETRY

The Artsakh national liberation struggle and the military theme are reflected in the Armenian literature. In the article we consider comparisons that are used in the Artsakh poetry of the liberation war, which are of great value.

In the comparisons used by the poet-liberators, phenomena often appear in a new way, in new relationships that help to better understand reality.

We analyze this method in terms of structure and content, and also refer to comparisons based on hyperbole and contrast. Opportunities for comparisons are widely used in matters of national movement, struggle, as well as from national, political spheres and ending with issues relating to social phenomena.

***Keywords**: comparison, feature, poetry, image, struggle for freedom, national movement, image, object, phenomenon, personality, stylistic, simple, total, use, describe, learn*

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը իր արտացոլումն է գտել հայ գրականության մեջ: Պատերազմական թեմատիկան՝ հայոց աննվաճ երկիր, հայոց անպարտ որդիք, հաղթանակներ, անկումներ, փոփոխվող արժեհամակարգեր, քաղաքական շահեր,ինտրիգներ, իրավունքի և արդարության արժեքներ, հիասթափություն, հույս, հավատ...ահա այս ամենը տեղ է գտել արցախյան ազատամարտի պոեզիայում:

Պատկերավորման միջոցների,ոճական տարբեր հնարների գործածումով բանաստեղծները պատկերել են մեր ժամանակներում ծավալվող անցքերը,պատերազմական գործողությունները, այլաբանել եղելությունները,երևույթները: Պատկերավորման միջոցները այն հնարանքներն են,որոնց կիրառությամբ նկարագրությունը դառնում է առավել շոշափելի, հուզական,առավել հնչեղ ու տպավորիչ:

Ազատամարտի պոեզիայում ոճական առանձնակի արժեք ունի համեմատությունը:Սա այն միջոցն է ,որ օգնում է հասկանալ,ճանաչել առարկաների , երևույթների միջև եղած կապերն ու հարաբերությունները :

Ինչպես գիտենք ,համեմատությունը երկու տարբեր առարկաների , երևույթների, անունների զուգորդում է, որը կատարվում է համապատասխան առարկաների, հատկանիշների նմանության կամ նույնացման հիմքի վրա: Համեմատության ճիշտ կառուցումը պայմանավորված է գրողի գեղարվեստական մտածողությամբ, առարկաների ու երևույթների միջև եղած ընդհանրությունները տեսնելու, դրանք ընկալելու և զգալու ունակությունից: Համեմատությունը հաճախ հեղինակի վերաբերմունքի, վայրկենական տպավորության արդյունք է՝ կապված տվյալ իրավիճակի, պայմանների հետ:

Համեմատության կազմում առկա են համեմատվող,համեմատելի առարկաներ իրենց այն հատկանիշներով ,որոնք դրվում են համեմատության հիմքում: <<Համեմատությունները կազմվում են 3 բաղադրիչներից՝ համեմատվող առարկան(համեմատելին), այն առարկան, որի հետ համեմատվում է(համեմատյալ), և այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը>>:/Լ,Եզեկյան,Հայոց լեզվի ոճագիտություն,Երևան,2007/:

Բերենք օրինակ:Վարդան Հակոբյանի <<Տաճարն Աստծո>> վիպերգը Արցախի ազատամարտի, պայքարի օրերի ծնունդ է:Հեղինակը անցյալի կերպարների մեջ ներկայացնում է երկրի նվիրյալներին.

<<Տորքի պես հզոր է և ուժեղ,

Դավթի պես գեղեցիկ է և արդար...>>:/1,328/

Կան համեմատություններ, որոնք կազմված են երկու եզրերից, և չի նշվում համեմատության հիմքը: Որպես համեմատելի եզր հանդես են գալիս այնպիսի առարկաներ, որոնց մեջ իրական հատկանիշը որոշակիորեն է դրսևորված:

Յուրի Սահակյանը <<Միակ սիրո իմ բերդապահ>>բանաստեղծության մեջ այսպիսի ցանկությամբ է դիմում իր Արցախին.

<<Գիրկդ առնես մոլորվածիս

Ու փայփայես **որդուդ նման**...>>:/2,100/

Կամ՝

Վ.Հակոբյանը <<Տաճարն Աստծո>> վիպերգում նկարագրում է արցախյան գոյամարտի հաղթանակներ, անկումներ ...և փշրվող երազանքներ,ձգտումներ.

<<Ոչ ոք չի հավաքում կոչերում

միտինգներում...

....ոսկորները

.....սուտ խոսքերի

սուտ քայլերի

սուտ երազների,

աչքակապության,

և դրանք փշրվում են **խաշամի պես**...>>:/1,337/

Հաճախ համեմատության հիմքում դրվում է առարկաների,երևույթների ոչ թե առարկայական հատկանիշը,այլ անհատական ընկալումը: Համեմատությունը կարող է կատարվել անսպասելի, ոչ հիմնական հատկանիշի հիման վրա, որ տվյալ դեպքում վերածվում է հիմնականի:
Անմիջական ոչ մի նմանություն չկա **բնազդ-ի և թթխմոր-ի** միջև,բայց մարդասպան-թուրքի գանգում եղած անասնական գարշահոտ բնազդների, դարերից եկած, **թթխմորի նման** թթված-մնացած լինելու հանգամանքը Դավիթ Հովհաննես բանաստեղծի մեջ ստեղծում է որոշակի զուգորդություն, և նա<<Մարդասպանը>> բանաստեղծության մեջ գրում է.
<<...Գանգում ուռչում են նախամարդու
մութ բնազդները
հանց թթխմոր>>:/2,53/
Արտեմ Հարությունյանը Արցախի ողբերգական օրերի,կրակի մեջ առնված,մոխրակույտի վերածված Շուշիի մասին գրում է.
,,Շուշին թուրքերը վառեցին
չորս կողմից,
կրակը շարժվում էր **հանց դաշույն>>:**/3,43/
Վ.Հակոբյանը համեմատություններում երևույթները հաճախ ներկայացնում է նոր կողմերով,նոր կապակցությունների մեջ ,որը օգնում է իրականությունը ավելի խորը ճանաչելուն:Արցախի ժողովուրդը արդարության իր պահանջով ,օգնության հույսով դիմում է գերտերություններին,,սակայն
<<Անտարբերությունը **պոչի պես** բուսել է
երկրի հետույքին...
ու, **ինչպես առակում** նշանավոր,
սառել-մնացել է գետի ջրերում>>:/1,326/
Այս համեմատությամբ հեղինակը քննադատում,ոչնչացնում է մեծ տերությունների քաղաքական խարդավանքները,արցախյան հարցի չարաշահումը:
Քննենք համեմատությունները կառուցվածքային տեսակետից:Համեմատությունները լինում են պարզ, ծավալուն: Պարզ համեմատությունները կազմվում են **պես,նման**, **ինչպես, որպես,ոնց,ասես, հանց** կապերով:
Ազատամարտի բոլոր բանաստեղծները դիմել են ռեքվիեմին: Ռոբերտ Եսայանը իր <<Ռեքվիեմ>>բանաստեղծության մեջ ,,հատում է խղճի սահմանները,, և նախնիների ոսկորները որպես շիվեր տնկում ազատության հողում.
<<...Ես տանում եմ
ոսկորները նախնիներիս,
որ շիվերի **պես** տնկեմ ազատագրված հողում...>>:/4,29/
Վ.Հակոբյանի ստեղծած հետևյալ համեմատությունում /արտահայտված **որպես** կապով / խարազանվում են տերությունների,,դիվանագետների նենգությունները. այս աշխարհում արդար ձայնի տեր չկա և այդ նույն գերտերությունները.
<<Քեզ կարոտի փշրանքներ են մեկնում,
որ քաղված են **որպես** աստվածային ծառի
արգելված պտուղներ...>>:/1,322/
Բերենք **ասես** կապով ստեղծված համեմատության օրինակ:Արտեմ Հարությունյանը <<Ստեփանակերտում>>բանաստեղծության մեջ նկարագրում է <<գրադ>>հրթիռի հարվածից հետո քաղաքում տիրող քաոսային վիճակը:Ավերված մետաքսագործարանի շուրջ սփռված շերամի բոժոժները՝որպես դեղին թիթեռներ, համեմատում է Աստծո աչքից ընկած,սառած,հողին կառչած արցունքների հետ.
<<...Ռմբակոծումից հետո շերամի հազարավոր
բոժոժներ կան սփռված՝
փոքրիկ,դեղին թիթեռներ,**ասես Աստծո**
աչքից ընկած արցունքներ...>>:/5,316/
Հեղինակը <<Հորս ծննդավայրը՝Շուշին>>բանաստեղծությունում իրեն դարձնելով թթենի՝ այն համեմատում է օտարության մեջ հայտնված հայի տանջված մարմնի հետ.
<<Իսկ ինքս

դարձել եմ
կանաչ թթենի,
ծերպ-ծերպ ագուցված՝
հանց օտարության մեջ
հայտնված
հայի տանջված
մարմին...>>:/2,89/

Ազատամարտի բանաստեղծների ստեղծած համեմատությունները աչքի են ընկնում իրենց կառուցվածքային բազմազանությամբ:Հետաքրքրական է ,որ համեմատություններ են ստեղծվել նաև համեմատյալին **-վարի** մասնիկի ավելացմամբ,որը խոսակցական երանգ է հաղորդում ասվածին:

Վ.Հակոբյանը <<1988 թիվ,փետրվար>> բանաստեղծության մեջ թուրք -ադրբեջանցու բռնատիրական մոլուցքը,սուտ խոստումները,ողբերգաշունչ վնգստոցը,սատանայական խորամանկությունները ծաղրում է հետևյալ համեմատությամբ.

<<Ժանիքը խրել կողերը դարի
իր սև նախճիրն է տոնում անարգել.
չի ոռնում սակայն,**շեյթանավարի**
վնգստում է սուտ մերձության խոսքեր>>:/1,62/

Հանդիպում ենք նաև ծավալուն համեմատությունների, երբ համեմատվող առարկայի կամ երևույթի նկարագրությունը ավելի լայն, ընդարձակ է տրվում, որի շնորհիվ ստեղծվում է մի ամբողջական պատկեր: Դրանք արտահայտվում են ստորադասական կապակցության ձևով. ստորադասական նախադասությունների կապը գլխավորի հետ իրացվում է **ինչպես, ինչպիսի, որքան, որչափ** հարաբերական բառերով: Գլխավոր նախադասության մեջ կարող են ունենալ համապատասխանաբար **այնպես, այնպիսի, այնքան, այնչափ** հարաբերյալները:

Յուրի Սահակյանը,<<Բերդ պար>>բանաստեղծության մեջ պատկերելով մեր հարատևման,մաքառումի պարը ,գրել է ..

<<...**հեգնոտ ժպիտն ենք թոթափել մեր թշնամու,**
ինչպես փոշին ենք թոթափում ճանապարհի,
Ու պարել ենք ինքնամոռած,արիակամ...>>:/2,99/

Այս համեմատության շնորհիվ համեմատելին հավասարվում է համեմատյալին,ստորացվում նրա չափ և ստանում բացասական բնութագրություն:

Սրանք անդրադարձ համեմատություններ են,որտեղ համեմատության երկու անդամներն էլ փոխադարձաբար բնութագրվում են:

Վ.Հակոբյանը <<Տաճարն Աստծո>> պոեմում քննադատում,ծաղրում է սեփական դեմք չունեցող գերտերություններին, թե ինչպես կարող են կերպարանափոխվել ըստ հանգամանքների. սկզբունքները,որոշումները, եթե Արցախի հետ են կապվում, անէանում են,հօդս ցնդում.

<<Բայց երբ այդ թասին մոտեցնում են
խոստումները
փրկության, հույսի,ափսոսանքի,,ցավի
և այլն,
դրանք միանգամից շաղում են՝
որպես մածունն է շաղում...>>:/1,323/

Սրա հիմքում ընկած է առաջին հայացքից ընդհանրություն չունեցող երևույթների ոչ սովորական համադրում,որն էլ հնարավորություն է տալիս հասնելու հեգնանքի:

Քննարկենք համեմատությունները բովանդակային առումով: Բացասական կերպարներին նկարագրելիս անձը համեմատվում է ինքնին զզվանք առաջացնող կենդանիների հետ:

Դավիթ Հովհաննեսը <<Արցախականք մեռած աղջիկը>> բանաստեղծության մեջ թուրք մարդասպանին,սրա շատանալ-բազմանալը համեմատում է **մորեխի** հետ,իսկ անկշտությունն ու անխղճությունը՝ **գայլի** .

<<**Եվ մորեխի պես**, մանր ու անվերջ,
դեռ գալիս են նրանք,շատանալով,
իրենց խղճի հետ հաշտ ու անվեճ,

ինչպես լինում է -զորշ գայլը լոկ>>:/2,52/
Երկրի վրա մոլեգնում են արյունով արբած թուրք բնազդները, և մարդկային մսով կշտացող, արյան ծարավ թուրքը համեմատվում է անկուշտ գայլի հետ.
<<...Տանում է նա
դեպի ավեր,ավար,դեպի ոխի
խրախճանք,-մինչև հագուրդ ստանա
ծարավը արյան,որ տանջում է իրեն,
ինչպես տանջում էր գայլ իր նախորդին...>>:/2,54/
Անձը կարող է համեմատվել անձի, երևույթի հետ:
Ռ.Եսայանը ,արցախյան գոյապայքարի նահատակ նվիրյալին համեմատելով հրեշտակի հետ, նրան սրբացրել է,աստվածացրել.
<<Դու-թևերը բաց **հրեշտակի պես**
մնացիր կախված
արդարության անդունդի վրա>>:/8,223/
Կամ՝<<**Որպես խաչքար,որպես հույս,հիշատակի հանգրվան**,
Ձեր անուններն են հառնում երազանքից մեր վաղվա>>:/8,284/
Ներկայացնում է Արցախի սուրբ նահատակներին,որոնք բարձրանում են որպես հրեշտակ հույսի,որպես հիշատակի խաչքար:
Անձը կարող է համեմատվել իրի հետ:
Ս.Խանյանը <<Նահատակ լուսո>>պոեմում աստվածացած լեգենդար Ավոյին համեմատում է իր սուրբ երկրի,աննվաճ Արցախի հետ.
<<Ազերական մահերի դեմ
Բռունցքվել է արևաբաղձ,
Արցախվել է **Արցախի պես,**
Մարտնչում է արցախացած>>:/9,225/
Իրը կարող է համեմատվել իրի հետ:
Արտեմ Հարությունյանը <<Արցախ երկիր>>բանաստեղծության մեջ այսպես է պատկերում պատերազմող Արցախը .
<<..Եւ
չազատագրված
հողերի վրա
արծվի ստվերն անցնում է
ասես **ռազմատենչ սև նավ...>>**:/2,86/
Այստեղ երևում է սև,տխուր ու ծանր ժամանակի ամբողջ պատկերը :
Հետևյալ օրինակում բախտի՝ ճոռացող անվի հետ համեմատվում է անհենակ մոլորակը,որը պտտվում է անտարբեր՝ աշխարհում տիրող իրադարձություններին.
<<...Ու գծում քարտեզներ
բախտի **անվի պես** ճոռացող այս հին **մոլորակի** վրա
անհենակ...>>:/5,11/
Այս համեմատությամբ հեղինակն իր արհամարհական վերաբերմունքն է արտահայտում մոլորակի վրա տիրող քաղաքական անարդարությունների նկատմամբ:
Իրը կարող է համեմատվել երևույթի հետ և հակառակը:
Անպատիվ ,հրեշագործ քաղաքը,որտեղ թափվել է հայի արյուն,եղել է ավեր ու թալան, համեմատվում է ուխտադրժության սիմվոլի հետ.
<<Եվ պիտի հիշվես **դու** միայն **որպես**
ուխտադրժության սիմվոլ անանուն...>>:/2,53/
Ռոբերտ Եսայանը<<Արցախ>>բանաստեղծությունում 88-ի օրերի,հանրահավաքների մասին գրում է.
<<**Դանակի պես սրված հայացքով** Առաջնորդի
կիսվում էին Հարության գաղափարն ու լույսը...>>:/2,71/:
Գործողությունը համեմատվում է գործողության հետ:
<<Եվ պիտի այրվեն բնակիչներդ հրում,

ինչպես այրվել են քո զոհերը,-նրանք,
ովքեր հայ կոչվելու խաչն էին կրում..>>:/2,52/
Դ.Հովհաննեսի ստեղծած այս համեմատությունը մարդու ըմբոստության արտահայտություն է ,հրեշագործության մերկացում:
Վիճակը համեմատվում է վիճակի հետ :
Տրված համեմատությամբ Վ.Հակոբյանը քննադատում է ազատամարտի օրերին երկրում տիրող քաղաքական ,կենցաղային ինտրիգները:
<<...**Ուր անծածկ շուկա հանված աղի նման,անձրևի տակ,**
խիղճը հալվում է>>:/5,30/
Գոյապայքարի,88-ի փետրվարի,շարժման հետ կապված ակնկալությունների,ժողովրդի ընդվզումների մասին գրում է.
<<Արյունաքամ է արևը լինում
պատուհանից դուրս նետված **մանկան պես,**
իսկ խաբկանքը իր ոստայնն է հինում,
երկինքը սարդի մի **ցանց է ասես**>>:/1,62/
Հատկանիշը՝ համեմատվում է հատկանիշի հետ:
Ինչպես.<<...Ապա գնդացիրների անշտապ **ճրթճրթոց,ոնց որ** ծմակի կերած-խմած ածդահա արջը ծանրումեծ քայլերով չոր ցախի վրայով անցնելիս լինի>>/6,48/
Հաճախ համեմատություններում որպես համեմատյալ եզր վերցվում են **պատմական ու դիցաբանական երևույթներ**: Բերենք օրինակ:Եղեռնագործ քաղաքը,որի անունը հեղինակը շուրթերը չպղծելու համար չի ուզում տալ, անիծում է,ինչպես անիծվել են Սոդոմ ու Գոմոր.
<<..Դու պիտի անիծյալ լինես,**ինչպես**
անիծյալ են եղել **Սոդոմ ու Գոմոր** >>:/2,52/
Համեմատությունները բազմազան են ոչ միայն իրենց դրսևորումներով, այլև կարող են զուգորդվել ոճական այլ միջոցներով: Ընդհանրապես հանդիպում ենք չափազանցության, հակադրության հիմքի վրա ստեղծված համեմատությունների:

Բերենք հակադրության հիմքի վրա ստեղծված համեմատության օրինակ Դ,Հովհաննեսի <<Արցախ և Հայաստան>>բանաստեղծությունից.
<<**Այնտեղ արյունը հողն է ոռոգում,**
այստեղ հոսում է որպես կեղտաջուր,
կրակոցն այնտեղ զարկ է իմացյալ,
այստեղ-հոփացած գիշերապարպում>>:/2,57/

Սա գրողի դժգոհությունն է երկրում տիրող խառնաշփոթ վիճակից,ճշմարիտի և կեղծիքի,բարոյականի և անբարոյի հակասությունից:

Վարդան Հակոբյանը <<Քրիստոսի ծաղիկները>>ասքում հայի երազները՝ բարձրաթռիչ, համեմատում է գահավիժող երազների հետ.
<<...Ուր երազները բարձրաթռիչ են՝երկնքից իրենք իրենց
վրա գահավիժող ու փշրվող **երազների նման**
վաղորդյան...>>:/6,29/

Հեղինակն ունի այնպիսի համեմատություններ, որոնք առաջին հայացքից տարօրինակ,անհեթեթ են թվում,բայց իմաստային նրբություններ են արտահայտում:Այսպես՝

<<**Հայտնին սուտ վիճակ է,ինչպես կեղծ է ձգտումն անկեղծ լինելու**>>:/6,23/

Կամ՝<<**Կրակն անցավ՝չանցնելու պես>>**:/6,22/

Այսպիսով՝ Ազատամարտի պոեզիայում գործածված համեմատության հնարավորությունները գործածված են շատ լայն ընդգրկումով՝ ազգային շարժման,պայքարի, ինչպես նաև համազգային,քաղաքական ոլորտներից սկսած,վերջացրած հասարակական երևույթներին վերաբերող հարցերով:

Օգտագործված գրականություն

1.Վարդան Հակոբյան,Մենարան,Երևան,1996:
2.Արցախի երգը,Ստեփանակերտ,2011:
3.Արտեմ Հարությունյան,Հեռուստապոեմներ<<Շուշի>> և <<Բաբելոն>>հյուրանոցների աշտարակից, Երևան,2010:
4.Ռոբերտ Եսայան,Անդրժամանակի հենարաններ,Ստեփանակերտ,2006:
5.Արտեմ Հարությունյան,Նամակ Նոյին,Երևան,1997:
6. Վարդան Հակոբյան,Քրիստոսի ծաղիկները,Երևան,2017:
7. Ռոբերտ Եսայան,Քառս և լույս, ,Ստեփանակերտ,2015:
8. Ռոբերտ Եսայան,Ասուպների եզերք, Ստեփանակերտ,2008:
9. Սոկրատ Խանյան, ընտիր երկեր,հատոր երրորդ,Ստեփանակերտ,2010: